ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 մայիսի 2024թ. թիվ 480

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ, Ռ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ, Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ,
Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ, Դ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ, Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ,
Ա.ԲԵՋԱՆՅԱՆԻՆ, Ա.ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ,
Ա.ԱԴԼՈՅԱՆԻՆ ԵՎ Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Գ.Մելիքսեթյանի 31.05.2024թ. զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Ղարսայանին, Վահրամ Դանիելյանին, Դավիթ Մանուչարյանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին, ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետներ Արտակ Դեմիրչյանին և Սամվել Խառատյանին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Արտաշես Ադլոյանին, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանին ս/թ մայիսի 31-ին մեկ օրով գործուղել ք.Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ

իրավիճակի կառավարման որոշ աշխատանքների իրականացման և համակարգման համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

31/05/2024

X

ԿԱՄՈ ԱԾՐԱՖՅԱՆ

Կ.ԱԾՐԱՖՅԱՆ

2024թ. մայիսի 31
ք.Վանաձոր